

Պետական գնու մների
մոնիտորինգի հաշվետվություն
2015-2016թթ.

Երևան 2016

Սույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ N19240): Ջեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի աշխատակազմ

Վարուժան Հոկտանյան
Ծրագրի ղեկավար

Արտակ Մանուկյան
Գնումների գծով փորձագետ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0019,
Անտառային փողոց, տուն 164/1
Հեռ.՝ (+374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (+374 10) 569519
Էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am

Table of Contents

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	7
Մոնիտորինգային ուղղության արդյունքների հակիրճ ամփոփում և առաջարկություններ	8
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	10
Մոնիտորինգի մեթոդաբանություն	10
Մոնիտորինգային ուղղության ուսումնասիրության արդյունքների հակիրճ ներկայացում	11
2ա. 2016թ. գնումների բողոքների քննության քանակական ցուցանիշների ուսումնասիրություն	12
2բ. Գնումների բողոքարկման որակական բնութագիրը	14
Մոնիտորինգային ուղղության հակիրճ ամփոփում և առաջարկություններ	17
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	19
Մոնիտորինգի մեթոդաբանություն	19
Մոնիտորինգային ուղղության ուսումնասիրության արդյունքների հակիրճ ներկայացում	20
Մոնիտորինգային ուղղության արդյունքների հակիրճ ամփոփում և առաջարկություններ	100
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4. ՊՈԱԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	101
ՊՈԱԿ-ների ֆինանսավորումը 2016թ.-ին	101
ՊՈԱԿ-ների ֆինանսավորումը 2015թ.-ին	105
ՊՈԱԿ-ների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության հետ կապված հիմնախնդիրներ	108
ՊՈԱԿ-ների ֆինանսավորումը 2010-2014թթ.	110
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5. ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐ	119
Մեկ անձի գնումների միտումները 2015թ.	120
Այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային մեթոդով իրականացված պայմանագրերի ուսումնասիրություն	121
2015թ. խոշորագույն պայմանագրերի ուսումնասիրություն	127
Մեկ անձից գնումներ 2016թ. հունվար-հունիս	128
Այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային մեթոդով իրականացված պայմանագրերի ուսումնասիրություն	129

2016թ. հունվար-հունիսին մեկ անձի հիմքով կնքված խոշոր պայմանագրերի ուսումնասիրության արդյունքները	133
Մոնիտորինգային ուղղության ուսումնասիրության արդյունքների հակիրճ ներկայացում	135
Շահերի բախման, կոռուպցիոն ռիսկերի, բյուջետային անարդյունավետության, անբավարար թափանցիկության և հաշվետվողականության օրինակներ	135
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՐԱԿԻՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	140
ՊՆ գնումների ուսումնասիրության արդյունքները.....	140
Էլեկտրոնային գնումների համակարգ	140
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	142
Հավելված 1. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկը.....	142
Հավելված 2. ԲԽ անդամների ցանկը 2016թ. հուլիսի 8-ի դրությամբ.....	144
Հավելված 3. Այլընտրանքի առկայության պարագայում 20 մլն դրամի սահմանաչափը գերազանցող այլ ոչ մրցակցային ձեռքբերումները 2015թ.....	148
Հավելված 4. Այլընտրանքի առկայության պարագայում 20 մլն դրամի սահմանաչափը գերազանցող այլ ոչ մրցակցային ձեռքբերումները 2016թ հունվար-հունիսին.....	163
Հավելված 5. Մեկ անձի հիմքով կնքված պայմանագրերի կառուցվածքը ըստ պատվիրատուների	165

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային գնումների համակարգը նշանակալի դերակատարում ունի ցանկացած երկրի տնտեսության գործընթացում: Նշվածը ավելի մեծ կարևորություն է ստանում հատկապես զարգացող երկրներում:

Հանրային գնումների համակարգը մեծ դեր է խաղում նաև Հայաստանի տնտեսության մեջ: 2015թ. ՀՀ-ում պետական մարմինների կողմից իրականացված գնումների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 430 մլրդ. ՀՀ դրամ, ինչը կազմում է պետբյուջեի ընդհանուր ծախսերի մոտ 30%, իսկ ՀՆԱ-ի մոտ 8.6%:¹ Աղյուսակ 1-ում ներկայացվել են պետական գնումների վերաբերյալ որոշ բնութագրական տվյալներ:

Աղյուսակ 1. 2015թ պետբյուջեի ծախսերի կառուցվածքը, ըստ գնման ուղղությունների

ՀՆԱ շուկայական գներով, մլրդ դրամ	5032	
Պետական բյուջեի ընդհանուր ծախսերը, մլրդ դրամ	1409	
Պետական գնումների ծավալը, մլրդ դրամ	431	
որից ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	259 (60%)	
այդ թվում՝		
Շարունակական ծախսեր	16 (6%)	3.7
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	5 (2%)	1.1
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	169 (65%)	39.2
Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	2 (0.7%)	0.4
Ընթացիկ նորոգում և պահպանում	18 (7%)	4.3
Նյութեր	49 (19%)	11.3
որից հիմնական միջոցների ձեռքբերում	172 (40%)	
այդ թվում շենքեր և շինություններ, որից	128 (74%)	29.7
շենքեր և շինությունների ձեռքբերում	5 (2.7%)	1.1
շենքեր և շինությունների շինարարություն	87 (51%)	20.3
շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում	36 (21%)	8.3
այդ թվում մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում, որից	37 (21%)	8.5
տրանսպորտային սարքավորումներ	2 (1.2%)	0.5
վարչական սարքավորումներ	6 (3.6%)	1.4
այլ մեքենաներ և սարքավորումներ	28 (16.6%)	6.6
այդ թվում այլ հիմնական միջոցներ, որից	7 (4.2%)	1.7
աճեցվող ակտիվներ	0.8 (0.4%)	0.2
ոչ նյութական հիմնական միջոցներ	4 (2.6%)	1.0
գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	0.5 (0.3%)	0.1
նախագծահետազոտական ծախսեր	1.5 (0.9%)	0.4

¹ Հաշվարկները կատարվել են 2015 թվականի պետական բյուջեի ծախսերի ուսումնասիրության հիման վրա:

Հանրային գնումների համակարգի արդյունավետության, թափանցիկության և ներքին բարեվարքության մակարդակների բարելավումը կարող է նպաստել երկրի կայուն ու երկարաժամկետ տնտեսական զարգացմանը լրացուցիչ գործոն հանդիսանալով փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) խթանման և նորարարության զարգացման համար: Միաժամանակ, Հայաստանում, ինչպես աշխարհի շատ երկրներում, հանրային գնումների ոլորտը, նրանում շրջանառվող մեծ գումարների պատճառով, կարող է պարարտ հող հանդիսանալ զանազան չարաշահումների և կոռուպցիոն դրսևորումների համար: Դրա մասին են վկայում նաև թե՛ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակառոտուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) վերլուծությունները, թե՛ հայաստանյան մամուլում վերջին տարիներին տեղ գտած բազմաթիվ հրապարակումները, որոնցում բերվել են ուռճացված գներով, իրենց նպատակներին չծառայող և այլ տիպի <<տարօրինակ>> պետգնումների բազմաթիվ փաստեր: Ունենալով նախկին խորհրդային հանրապետությունների շարքում հանրային գնումները կարգավորող լավագույն օրենսդրական դաշտերից մեկը՝ պրակտիկայում, ինչպես ցույց են տվել թե՛ տեղական, և թե՛ միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները, այդ օրենսդրության կիրարկումը շարունակում է մնալ անբավարար: Շարունակում են մեծ տոկոս կազմել մեկ անձից կատարվող գնումները, կան խնդիրներ կապված գնումների բողոքարկման համակարգի հետ: Շարունակում է փոքր մնալ էլեկտրոնային գնումների ծավալն իրականացված գնումների ընդհանուր ծավալում: Անհրաժեշտ է շեշտել, որ համակարգում առկա կոռուպցիոն դրսևորումները և այլ չարաշահումները կարող են էապես վտանգել նաև երկրի տնտեսական անվտանգությունը: Նշված հիմնախնդիրների լուծմանը կարող է նպաստել առկա օրենսդրության կատարելագործումը, իրավական ակտերի պատշաճ կիրարկումը, ոլորտի թափանցիկության ընդլայնումը և հասարակության տեղեկացվածության աստիճանը: Վերջինս էապես կբարելավվի, եթե քաղաքացիական հասարակության ավելի մեծ թվով կառույցների համար այս ոլորտում տեղ գտնող զարգացումներն արժանանան ավելի մեծ ուշադրության:

2007 թ.-ից սկսած <<Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակառոտուպցիոն կենտրոն>> (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպությունը՝ սկզբում Բաց հասարակության ինստիտուտ- Բուդապեշտի (2007թ.-ից մինչև 2013թ.), իսկ այնուհետև Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (2014թ.-ից մինչ այժմ) աջակցությամբ իրականացնում է ՀՀ պետական գնումների համակարգի ուսումնասիրություններ: Այդ ուսումնասիրությունների նպատակն է բացահայտել և վերլուծել ՀՀ հանրային գնումների ոլորտում տեղ գտած կոռուպցիոն ռիսկերը և դրանց պատճառները, նպաստել ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության ընդլայնմանը, վեր հանել գնումները կարգավորող օրենսդրության և նրա կիրարկման բացերը և այդ ամենի հիման վրա համապատասխան պետական մարմիններին ներկայացնել առաջարկություններ դրանց հաղթահարման ուղղությամբ: Սույն հրապարակման

մեջ ամփոփված են կազմակերպության կողմից 2015թ. սեպտեմբերից մինչև 2016թ. օգոստոս իրականացված մոնիտորինգային ծրագրի արդյունքները: Մոնիտորինգի են ենթարկվել ողջ 2015 թվականի և 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ հանրային ոլորտում իրականացված գնման գործընթացների որոշ բաղադրիչներ², ինչպիսիք են օրենսդրական դաշտը, մեկ անձից գնումները, բողոքարկման համակարգը և շրջանակային համաձայնագրերը:

² Բացի ողջ 2015թ.-ի, գնման գործընթացների որոշ բաղադրիչների մոնիտորինգն ընդգրկել է 2016թ. միայն առաջին եռամսյակը, իսկ որոշ այլ բաղադրիչների դեպքում՝ ավելի ավելի երկար ժամանակահատված:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Մոնիտորինգի ժամանակահատված՝ 2015թ. նոյեմբեր 1 - 2016թ. հունիս 30

Սույն ուղղության մոնիտորինգային ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվել են մոնիտորինգի ժամանակահատվածում տեղ գտած օրենսդրական փոփոխությունները:

Օրենսդրական զարգացումների հակիրճ ներկայացում

1. Դիտարկվող ժամանակահատվածում տեղի են ունեցել մի շարք օրենսդրական փոփոխություններ³, որի համատեքստում լրացումներ են կատարվել էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի մեջ և/կամ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել 2011թ. փետրվարի 10-ի Գնումների գործընթացի կազմակերպման մասին N 168-Ն որոշման մեջ:
2. Այնուհանդերձ կարևորագույն օրենսդրական փոփոխությունը հիմնականում Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցությամբ պայմանավորված գնումների մասին նոր օրենքի նախագծի առկայությունն է⁴, որի մասով ԹԻՀԿ կարծիքին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ:⁵
3. 2016թ. հուլիսին ՀՀ ֆինանսների նախարարությունը (ՖՆ) սկսեց տեղեկատվության տրամադրման նոր մոդուլի ներդրում, որի շնորհիվ իրենց լուծումն են գտնում ԹԻՀԿ-ի բարձրաձայնած որոշ հիմնախնդիրները:⁶
4. Ի լրումն նախկին հրապարակումներում կատարված առաջարկների, դիտարկվող ժամանակահատվածում, ԹԻՀԿ-ն առաջարկել է, որ պետք է միջոցառումներ ձեռնարկել ԵԱՏՄ գնումների միասնական պորտալի ստեղծմանն օֆշորային ընկերությունների վերջնական բենեֆիցիարների բացահայտման ուղղությամբ:
5. Հասկանալի է, որ մրցակցային ուղղություններում ոչ մրցակցային սկզբունքների կիրառությունը ռիսկային մոտեցում է, ուստի օրենսդրական փոփոխությունների համատեքստում առաջարկում ենք դադարեցնել ՀՀ կառավարության կողմից մրցակցային ուղղություններում դրամաշնորհների տեսքով առանց մրցույթի գումարներ հատկացնելու պրակտիկան:

³Օրինակ՝ <http://gnumner.am/download/168696.html>, <http://gnumner.am/download/147834.html> ֆինանսների նախարարի հրամաններով ևս փոփոխություններ/լրացումներ են կատարվել:

⁴<http://gnumner.am/download/162777.html>

⁵http://transparency.am/gnumner/legislation/TIAC_comments-%20LP.pdf

⁶<https://armeps.am/ppcm/public/reports>

Մոնիտորինգային ուղղության արդյունքների հակիրճ ամփոփում և առաջարկություններ

Ա) ԹԻՀԿ բարձրաձայնած օրենսդրական հիմնախնդիրները մնում են գրեթե անփոփոխ: Բացի այդ, ԹԻՀԿ գնումների քաղաքականության գծով փորձագետ Ա. Մանուկյանի կողմից պարբերաբար բարձրացվում է պետգնումների համակարգի համատեքստում սիրիահայ գործարար հանրության հետ աշխատելու անհրաժեշտության մասին, որի իրավական կարգավորման մասով որևէ գործուն քայլեր չեն իրականացվում:

Բ) Իրավակիրարկման մասով առկա են էական բացթողումներ:

Գ) Նկատվում է միտում, երբ ԼՂՀ-ում գրանցված ընկերությունները մասնակցում և հաղթում են պետգնումների մրցույթներում: Ներկայումս ԼՂՀ-ում գրանցված ընկերությունների սեփականատերերի մասով տեղեկություններ հայթայթելը հնարավոր չէ ինչպես e-register.am կայքի, այնպես էլ շահագործող համապատասխան մարմնի կողմից: Թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է ներդաշնակեցնել ԼՂՀ պետոեզիստրի տվյալները և հնարավորություն ընձեռել տվյալների ստացման մատչելիության բարձրացման ուղղությամբ, օրինակ՝ առցանց եղանակով:

Դ) Միջոցառումներ իրականացնել արխիվացման ծառայությունների փոխարեն ամպային տեխնոլոգիաների կիրառության համար: Նույնը վերաբերում է նաև վերապատրաստումների մասով կատարվող ծախսերի օպտիմալացմանը, մասնավորապես, էլեկտրոնային մոդուլների ներդրմանը:

Ե) Բարձրացնել ՊՈԱԿ-ների հաշվետվողականությունը և հետևել դրամի արժևորման սկզբունքի պահպանությանը:

Զ) Մշակել ու ներդնել հաշվետվողականության միասնական ստանդարտներ, որոնց համատեքստում (առնվազն) պետական կառավարման մարմինները իրենց պաշտոնական կայքերում պարտավորված կլինեն տեղադրել գնումների հաշվետվությունները, գոնե տարեկան կտրվածքով:

Է) Միջոցառումներ իրականացնել պատվիրատուների մոտ ապրանքային մնացորդների շարժը վերահսկելու ուղղությամբ: Նշվածը որոշակիորեն կնվազեցնի

այն ռիսկը, որ օրինակ տեխնիկական բնութագրերով սահմանված “հայկական ձվի” փոխարեն, հաղթող մասնակիցը չմատակարարի գնով ավելի ցածր իրանական ձուն:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Մոնիտորինգի ժամանակահատված՝ 2015թ. հունվարի 1 - 2016թ. հուլիս 8

Մոնիտորինգի մեթոդաբանություն

Գնումների բողոքարկման արդյունավետ, անկախ և անկողմնակալ համակարգը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- Գնումների բողոքարկման խորհուրդ (ԲԽ) ներկայացված բողոքները պետք է լինեն մատչելի հանրությանը.
- ԲԽ անդամների ընտրությունը պետք է լինի թափանցիկ և ապահովի գնման գործընթացում շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավվածությունը ԲԽ կազմում.
- Պետք է բացառվեն ԲԽ անդամների շահերի բախման հնարավոր բոլոր իրավիճակները.
- ԲԽ հանձնաժողովների ձևավորումը պետք է ապահովի ԲԽ անդամների հավասարաչափ ներգրավվածությունը բողոքների քննության գործընթացներում.
- ԲԽ որոշումները պետք է լինեն թափանցիկ, արտաքին ազդեցություններից զերծ, անկողմնակալ և բխեն գնումների մասին օրենսդրությունից:

Ելնելով վերը նշված պահանջներից՝ մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել.


1. Գնումների աջակցման կենտրոն (ԳԱԿ) ներկայացված բողոքների գրանցման և դրանց հրապարակման կանոնակարգերի կիրարկումը:
2. ԲԽ անդամների, ԲԽ հանձնաժողովների անդամների ընտրության և հանձնաժողովների կազմավորման օրենսդրական հիմքերի կիրարկումը:
3. Բողոքների վերաբերյալ ԲԽ կողմից ընդունված որոշումներում ԲԽ անդամների մասնակցությունը (գնումների պաշտոնական կայքում հրապարակված ԲԽ անդամների ցուցակի և ԲԽ ընդունված որոշումներին մասնակցած անդամների մասնակցության վերլուծություն):
4. ԲԽ հանձնաժողովների անդամների կողմից շահերի հայտարարագրման օրենսդրական պահանջի կիրարկումը:
5. ԲԽ կողմից ընդունված որոշումների մատչելիությունը և նրանցում առկա միտումները, և գնումների վերաբերյալ օրենսդրությանը ԲԽ կողմից ընդունված որոշումների համապատասխանությունը:

6. Բն որոշումների և ԳԱԿ-ի դիրքորոշումների միջև բովանդակային տարբերությունները:

Սույն մոնիտորինգային ուղղության շրջանակներում ուսումնասիրվել է գնումների պաշտոնական կայքի (www.gnumner.am) **Բողոքարկում** խորագրում ներկայացված տեղեկատվությունը:

Մոնիտորինգային ուղղության ուսումնասիրության արդյունքների հակիրճ ներկայացում

Բողոքարկման համակարգի վերաբերյալ տեղեկություններն ամփոփված են հետևյալ ենթախորագրերում, տես **Նկար 1**:




Նկար 1.

1. Բողոքների վերաբերյալ կայացած որոշումներ,
2. Ներկայացված բողոքների վերաբերյալ հայտարարություններ,
3. Գնումների բողոքարկման հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ տեղեկատվություն,
4. Գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի ներկայացրած եզրակացությունը բողոքի վերաբերյալ,
5. Գնումների բողոքարկման հանձնաժողովի անդամների շահերի բախման բացակայության վերաբերյալ հայտարարություններ:

6. Տեղեկատվություն, որ գնումների բողոքարկման հանձնաժողովի նիստերին կարելի է հետևել առցանց e-gov.am կայքում
7. Տեղեկատվություն բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին
8. Բողոքարկման վիճակագրություն

Բողոքարկման խորհրդի անդամների ցանկը տեղադրված է հետևյալ խորագրում, տե՛ս նկար 2:



Նկար 2.

Այս բոլոր աղբյուրներում առկա տեղեկատվությունն ուսումնասիրվել է բողոքարկման համակարգի ուսումնասիրության համատեքստում

2ա. 2016թ. գնումների բողոքների քննության քանակական ցուցանիշների ուսումնասիրություն

2016թ հունվարի 1-ից մինչև հուլիսի 8-ը Գնումների բողոքարկման խորհրդին (ԲԽ) է ներկայացվել 69 բողոք, որից ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է 32 բողոք (կամ ներկայացվածի 44%): Միաժամանակ մերժվել է 32 բողոք և առանց քննության է թողնվել 5 բողոք:

Աղյուսակ 2. Գնումների համակարգում բողոքների քանակական բնութագիրը 2011-2016թթ.

	Առանց քննության		Բավ.		Մերժ.		Ընդամենը	
2011	6	23%	15	58%	5	19%	26	100%
2012	10	26%	17	45%	11	29%	38	100%
2013	10	20%	19	39%	20	41%	49	100%
2014	2	4%	22	45%	24	51%	48	100%
2015	3	6%	24	44%	27	50%	54	100%
2016 ⁷	5	7%	32	46%	32	46%	69	100%

Ուշագրավ է, որ մասնակիցները հիմնականում դժգոհ են ՀՀ պաշտպանության նախարարության (ՊՆ) գործունեությունից, մասնավորապես 69 բողոքներից 15-ը (22%) բաժին է ընկնում ՊՆ-ին: Բողոքների կառուցվածքն ըստ մարմինների ներկայացված է **Աղյուսակ 3**-ում:

Բողոքներ են ներկայացվել 35 մարմինների դեմ, որոնցից 24-ի դեմ ներկայացվել են մեկական բողոք: **Աղյուսակ 3**-ում ներկայացված են այն պատվիրատուները, ում նկատմամբ ներկայացվել է մեկից ավելի բողոք:

Աղյուսակ 3. Պատվիրատուների դեմ ներկայացված բողոքների կառուցվածքը

Պատվիրատուն	Պատվիրատուի դեմ ներկայացրած բողոքների թիվը	Մասնաբաժինը ընդհանուրում
ՊՆ	15	21.1
Երևանի քաղաքապետարան	8	11.3
Վայքի քաղաքապետարան	5	7.0
Երևանի ՋԷԿ ՓԲԸ	4	5.6
Նորք Մարաշ ԲԿ ՓԲԸ	3	4.2
ՀԱԷԿ	2	2.8
Նորք հոգեբուժական կենտրոն ՓԲԸ	2	2.8
ՔԿՎ	2	2.8
Արդարադատության ակադեմիա ՊՈԱԿ	2	2.8
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ	2	2.8
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2	2.8
Ընդամենը	47	66.2

Ուշագրավ է, որ ՊՆ դեմ ներկայացված բողոքները հիմնականում աճել են ապրիլյան պատերազմից հետո, ընդ որում դրանցից մեկն անանուն է: Մասնավորապես մինչև 2016թ հունվարի 1-ից ապրիլի 1-ը ընկած

⁷2016թ. Հունիսի 8-ի դրությամբ բողոքարկման խորհրդի կողմից ուսումնասիրված բողոքների թիվը կազմում է 69 բողոք:

Ժամանակահատվածում ստացվել է միայն 6 բողոք, իսկ ապրիլ-մայիս ամիսներին դրանք ավելացել են ավելի քան 1.5 անգամ: Մա ինչ-որ տեղ նշանակում է, որ ապրիլյան պատերազմից հետո գործարար հատվածը ավելի հաճախակի է փորձել բարձրաձայնել ՊՆ հետ հարաբերություններում իր ունեցած խնդիրների մասին:

ԲԽ որոշումների ուսումնասիրությունը փաստում է, որ տեղեկագրի հրապարակման պահի դրությամբ երկու բողոքի մասով տեղեկատվությունը բացակայում է (ԳԲԽ-45/16 և ԳԲԽ 57/16):

Մտահոգիչ է նաև այն, որ ավելացել է առանց քննության բողոքների թիվը: 2016թ. հունվար-հունիս ամիսների բողոքների մոնիտորինգի տվյալները ցույց են տալիս, որ 2016թ. էականորեն կավելանա բողոքների թիվը, մասնավորապես արդեն իսկ 2015թ. ողջ տարվա համեմատ արձանագրվել է ավելի քան 25 տոկոս աճ: Դիտարկվող ժամանակահատվածում ԲԽ կողմից քննվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու 11 դիմումներ, որից բավարարվել է 3-ը (ներկայումս սև ցուցակում ներառված սուբյեկտների ցանկը ներկայացված է **Հավելված 1**-ում): Ի լրումն պետք է նշել, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Գնումների մասին օրենքի (ԳՄՕ) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտումներ թույլ տված մասնակիցների ցանկում դիտարկող ժամանակահատվածում սահմանափակված է շուրջ 90 ընկերությունների մասնակցություն, ինչն աննախադեպ աճ է:⁸

2բ. Գնումների բողոքարկման որակական բնութագիրը

2016թ. հուլիսի 8-ի դրությամբ գնումների պաշտոնական կայքում ներբեռնված գնումների բողոքարկման խորհրդի անդամների ցանկում ներկայացված էին 83 անդամի տվյալներ: Անդամների ցանկը ներկայացված է **Հավելված 2**-ում:

Անդամների մասնակցությունն ինչպես բողոքների, այնպես էլ սև ցուցակում ներառելու մասով որոշումներ կայացնելու մասով ցույց է տալիս, որ 83 անդամներից 27-ը (34%) առնվազն 2014թ. հունվարի 1-ից երբևէ չեն ընտրվել համակարգի կողմից, չնայած այն համարվում է պատահական ընտրության վրա հիմնված (տես **Աղյուսակ 4**):

Աղյուսակ 4. Բողոքների քննությանը չմասնակցած ԲԽ անդամների ցանկը

Մկրտչյան Արամ	ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ
Մանուշարյան Մարատ	ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի գնումների և մատակարարումների բաժնի պետ
Օհանյան Ռուդիկ	ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տնտեսական վերլուծության և գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության պետի տեղակալ
Գասպարյան Գայանե	ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության իրավական ապահովման վարչության իրավական

⁸<http://qnumner.am/cank-sahm07.07.16.pdf>

	պաշտպանության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր
Մկրտչյան Հովիկ	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահի խորհրդական
Մաթևոսյան Էդուարդ	Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի գլխավոր առույիտոր
Օրդյան Ռուդիկ	Մասիսի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ
Հովհաննիսյան Արթուր	Ալավերդու քաղաքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ
Բուդաղյան Արտեմ	Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ղեկավարի օգնական
Կարապետյան Լիանա	Ագարակի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ
Ավետիսյան Արթուր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի պետ
Գալստյան Տիգրան	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսատնտեսագիտական եւ հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Թամրազյան Սամվել	ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ
Խնձրցյան Խաչատուր	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Միմոնյան Հովսեփ	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Մարգարյան Վոլոդյա	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Մանուկյան Կարինե	ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության գնումների համակարգող
Ապերյան Արթուր	ՀՀ գյուղ. նախ. աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսարդյունաբերության բաժնի առաջատար մասնագետ
Թադևոսյան Ռուդիկ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետ
Կոչեցյան Հայկ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժնի առաջին կարգի մասնագետ
Ղազարյան Գորգեն	ՀՀ ԿԱ ՊԵԿ Գործերի կառավարման վարչության գնումների և շինարարության բաժնի գլխավոր մասնագետ
Շուշան Մմբաթյան	Բերդի քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Մաթենիկ Զաքարյան	Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
Նարինե Փինայան	Վեդու քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
Արմենակ Հովհաննիսյան	Դիլիջանի քաղաքապետարանի Ներքին առույիտի բաժնի պետ
Աղավնի Հովհաննիսյան	Թայինի քաղաքապետարանի <<Թայինի կոմունալ ծառայություններ>> ՀՈԱԿ-ի հաշվապահ
Արմեն Մարգարյան	Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակ ՀԿ-ի համանախագահ


Ուետք է հավելել, որ **Վիկտորյա Ղազարյանը** շարունակում է մասնակցել ԲԽ նիստերին՝ ընդգրկված չլինելով ԲԽ անդամների ցանկում: Նույնը վերաբերում է նաև Վիգեն Զիլինգարյանին (տե՛ս **Նկար 3** և **Նկար 4**):⁹

Նախկինում ԹԻՀԿ-ի կողմից եղել էր անդրադարձ, որ գնումների պաշտոնական կայքի Գնումների բողոքարկման խորհրդի ցուցակ բաժնում տեղադրված են ԳԲԽ անդամների վերաբերյալ տվյալները: ԹԻՀԿ-ի կողմից բարձրաձայնվել էր, որ այդ տվյալներում նշված ժամկետները չեն համապատասխանում իրականությանը (տե՛ս հետևյալ հղումը <http://gnumner.am/download/135096.html>): Ուրախալի է, որ այս մասով ակնհայտ սխալ տեղեկությունները, թեև բավականին ուշացումով, սակայն ի վերջո շտկվել են (տե՛ս <http://gnumner.am/am/category/194/1.html> կայքի հրապարակված 27.06.2016 տարբերակում): Նույն տարբերակում նկատում ենք, որ առկա են տեղեկություններ ԲԽ անդամների անձնական օգտագործման հեռախոսահամարների վերաբերյալ, ինչը կարծում ենք նպատակահարմար չէ, այդ թվում նաև անձնական տվյալների գաղտնիության տեսանկյունից:

⁹ Գնումների տեղեկագրի I հրապարակումում անդրադարձել էինք, որ 3 անձինք (Ղազարյան Վիկտորիա, Ֆրանգյան Ազգանուշ, Գևորգյան Գոռ) չնայած մասնակցում են բողոքների քննություններին, սակայն ներգրավված չեն ԲԽ ցանկում:


Բողոքների փաթեթի ուսումնասիրությունը վեր է հանում մի շարք ուշագրավ, երբեմն զավեշտալի հանգամանքներ, որոնց կարելի է ծանոթանալ այս ծանոթագրության¹⁰ մեջ բերված հղումների միջոցով: Ուսումնասիրությունը վկայում է նաև էլեկտրոնային գնումների տեխնիկական խնդիրների մասին:

Նկար 3.



¹⁰ <http://gnumner.am/download/152257.html>, <http://gnumner.am/download/182308.html>, <http://gnumner.am/download/180032.html>,
<http://gnumner.am/download/180080.html>, <http://gnumner.am/download/179620.html>, <http://gnumner.am/download/167856.html>
<http://gnumner.am/download/166727.html>, <http://gnumner.am/download/171644.html>
<http://gnumner.am/download/171486.html>

Նկար 4.



Մոնիտորինգային ուղղության հակիրճ ամփոփում և առաջարկություններ

Ա) Ընդհանուր առմամբ նկատելի են որոշակի դրական տեղաշարժեր հաշվետվողականության առումով: Այնուհանդերձ առցանց հեռարձակման որակի և ամբողջականության մասով դեռևս առկա են խնդիրներ:

Բ) Առկա են հիմնավոր կասկածներ, որ Բողոքարկման խորհրդի անդամների մասնակցությունը բողոքարկման քննմանը հիմնված չէ պատահական ընտրության սկզբունքի վրա: Միաժամանակ առկա են տեղեկություններ ԲԽ անդամների անձնական օգտագործման հեռախոսահամարների վերաբերյալ, ինչը կարծում ենք նպատակահարմար չէ, այդ թվում նաև անձնական տվյալների գաղտնիության տեսանկյունից:

Գ) Եղել են դեպքեր, երբ բողոքների քննությանը մասնակցել են անձինք, որոնք չեն հանդիսացել Բողոքարկման խորհրդի անդամներ: Միաժամանակ ԿԲ-ի ներկայացուցիչ ԳԲԽ-ի ցանկում չի եղել, չնայած Գնումների մասին օրենքում համապատասխան հոլմանը:

Դ) Էականորեն ավելացել են սև ցուցակում ընդգրկված սուբյեկտները:

Ե) Միջոցառումներ իրականացնել շահագրգիռ մարմինների տված տեղեկությունների հիման վրա բողոքարկման որոշումներ կայացնելու ռիսկային պրակտիկայի կանոնակարգման համար: Օրինակ՝ տեխնիկական խնդիրների մասով պարզաբանում է պահանջվում համակարգի շահագործում իրականացնող Այյու Նեթուորքս ՄՊԸ-ից և այլն:

Զ) Անտրամաբանական է թեժ գծի առկայության պարագայում շարունակել բողոքների ներկայացման վճարովի լինելու պրակտիկան: Առաջարկում ենք կիրառել ԹԻՀԿ կողմից ստեղծված հանրային գնումների վերահսկողության պորտալի գաղափարը/<http://transparency.am/gnumner/>

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Մոնիտորինգի ժամանակահատված՝ 2015թ. ապրիլի 1-2016թ մարտի 31¹¹

Մոնիտորինգի մեթոդաբանություն

Ուսումնասիրվել են շրջանակային համաձայնագրերի (ՇՀ) 2015թ տարեկան միտումները, ինչպես նաև 2016թ. հունվար-մարտի տվյալները: ՇՀ միտումների ուսումնասիրության համատեքստում գնումների պաշտոնական կայքից ներբեռնվել, վերլուծվել են ՇՀ ամսական հաշվետվությունները և կառուցվել են դինամիկ շարքեր:

Դիտարկվող ամսում հաղթող մասնակիցների պարբերականության և պայմանագրերի խոշորության տարանջատման համար կիրառվել են հետևյալ չափանիշները՝

ՇՀ գնման ուղղությունը	Քանակային	Գումարային
Ապրանքներ	10 և ավելի մրցույթ	10 մլն և ավելի
Աշխատանքների և ծառայությունների գծով	5 և ավելի մրցույթ	5 մլն և ավելի

Բացի այդ տրվել են կենտրոնացվածության գնահատականներ, որոնք ստացվել են Հերֆինդալ-Հիրշմանի համաթվով ստացվող արժեքների և խոշորագույն խաղացողների մասնաբաժինների հանրագումարի արդյունքում: Եթե Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով ստացվող արժեքները մեծ են 1800-ից ապա դա խոսում է տվյալ շուկայում բարձր կենտրոնացվածության մասին:

Խոշորագույն և նվազագույն պայմանագրերի արժեքային խզվածության առումով ցանկալի մակարդակ է դիտարկվել 10000 մակարդակը

Փորձ է արվել նաև անդրադառնալ ՇՀ-ով պատվիրատուների կենտրոնացվածության հարցերին: ***Բացի այդ կատարվել են երեք և հինգ խոշորագույն խաղացողների մասնաբաժնի մասով ուսումնասիրություններ, որի արդյունքները ամփոփվել են Աղյուսակ 7-ում:***

Ուսումնասիրության ընթացքում ստացված տվյալները համադրվել են ԳԱԿ-ի տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տվյալների հետ:

¹¹ Պետք է նշել, որ գնումների պաշտոնական կայքում շրջանակային համաձայնագրերի հաշվետվություններ դիտարկվող ժամանակահատվածում առկա են միայն ապրիլ-հոկտեմբեր ամիսների համար: Հետագայում այն թարմացվել է անկանոն պարբերականությամբ:

Մոնիտորինգային ուղղության ուսումնասիրության արդյունքների հակիրճ ներկայացում

ՇՀ-ի հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ առկա է հաղթողների միջինից բարձր կենտրոնացվածություն, իսկ պետական գնումները գրավիչ չեն նոր խաղացողների համար:

Հիմնախնդիրների շարքից պետք է առանձնացնել նաև այն, որ ԳԱԿ-ի կողմից ներբեռնված ՇՀ ամսական տվյալներում ներկայացված տվյալները չեն արտացոլում իրականությունը, քանի որ դրանց հանրագումարում ստացվող տարեկան մեծությունը, հատկապես գումարային առումով զգալիորեն ավելի փոքր է ԳԱԿ-ի կողմից հրապարակումներում արտացոլված թվից:

Աղյուսակ 5-ում ներկայացված են ԳԱԿ-ի կողմից հրապարակված ՇՀ-ի ագրեգացված տարեկան տվյալների և գնումների պաշտոնական կայքում ներբեռնված ՇՀ ամսական տվյալների համադրման արդյունքները:

Աղյուսակ 5. ՇՀ համեմատական ԳԱԿ-ի և փաստացի ամսական տվյալների միջև

	Ապրանք	Ծառայություն	Աշխատանք	Ընդամենը
ՇՀ ընթացակարգերի տարեկան ագրեգացված տվյալները ըստ ԳԱԿ-ի	4026	936	306	5268
ՇՀ ընթացակարգերի տարեկան տվյալները ըստ ԹԻՀԿ-ի	3767	983 ¹²	34312	5093
Շեղումը/բացակայող տվյալների տոկոսը	6%			
ՇՀ-ով գեներացված պարտավորությունների տարեկան ծավալը ըստ ԳԱԿ-ի, մլրդ դրամ	62.4	5.5	13.6	81.6
ՇՀ-ով գեներացված պարտավորությունների տարեկան ծավալը ըստ ԹԻՀԿ-ի, մլրդ դրամ	6.3	3.6	5.4	15.4
Շեղումը/բացակայող տվյալների տոկոսը	90%	35	60	81

Քանակային առումով հիմնական լրջագույն տարբերություններ են առկա ապրանքների և աշխատանքների ձեռքբերման մասով: Մասնավորապես, եթե ՇՀ-ով ձեռքբերված ապրանքների մասով ընթացակարգերի շեղումը մոտ 6% է, ապա ՇՀ-ով ապրանքների և աշխատանքների ձեռքբերման գումարային պատկերը թափանցիկության տեսանկյունից խիստ մտահոգիչ է: Մասնավորապես 62 մլրդ. դրամ ՇՀ-ով ապրանքների ձեռքբերումներից տեղեկություններ են առկա միայն 6 մլրդ. դրամի մասով, իսկ աշխատանքների պարագայում 13.6 մլրդ. դրամից տեղեկություններ են առկա միայն 5.4 մլրդ. դրամի մասով: Այսինքն, **ԹԻՀԿ մոնիտորինգը փաստում է, որ ամենայն հավանականությամբ ՇՀ ձեռքբերումները ամբողջությամբ չեն արտացոլվում ԳԱԿ ամսական հաշվետվություններում:**

¹² Քանակային տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ դեպքերում մի քանի պայմանագրեր խմբավորվել են մեկ պայմանագրի մեջ, ինչը ԹԻՀԿ մեթոդաբանությամբ դիտվում է առանձին պայմանագրեր:


ՇՀ-ով ձեռքբերումները գրաֆիկորեն արտացոլված են **Նկար 5**-ում, ինչպես նաև **Աղյուսակ 6**-ում: Առավել մանրամասն մի շարք ցուցանիշներ ներկայացված են **Աղյուսակ 7**-ում:

Աղյուսակ 6. ՇՀ ձեռքբերումների ամսական քանակային և գումարային դինամիկան

		ՇՀ ընթացակարգերի քանակը, հատ	ՇՀ ընթացակարգերի արդյունքում գեներացված պայմանագրային պարտավորությունը, մլն դրամ
Հունվ. 2015	Ապր.	91	228
	Ծառ.	70	587
	Աշխ.		
Փետր. 2015	Ապր.	228	521
	Ծառ.	262	989
	Աշխ.	10	0.7
Մարտ 2015	Ապր.	466	1136
	Ծառ.	165	126
	Աշխ.	55	49
Ապրիլ 2015	Ապր.	622	1407
	Ծառ.	46	45
	Աշխ.	13	579
Մայիս 2015	Ապր.	510	248
	Ծառ.	7	20
	Աշխ.	27	122
Հունիս 2015	Ապր.	152	74
	Ծառ.	9	14
	Աշխ.	2	2
Հուլիս 2015	Ապր.	228	819
	Ծառ.	13	22
	Աշխ.	19	15
Օգոս. 2015	Ապր.	523	232
	Ծառ.	49	.43
	Աշխ.	11	15
Սեպ. 2015	Ապր.	204	224
	Ծառ.	50	77
	Աշխ.	9	21
Հոկ. 2015	Ապր.	125	97
	Ծառ.	31	46
	Աշխ.	119	22
Նոյ. 2015	Ապր.	270	355
	Ծառ.	51	85
	Աշխ.	24	40
Դեկտ. 2015	Ապր.	348	959
	Ծառ.	230	1573
	Աշխ.	54	4624
Ընդամենը 2015թ.	Ապր.	3767	6300
	Ծառ.	983	3628
	Աշխ.	343	5489
Հունվ. 2016	Ապր.	197	3229
	Ծառ.	143	464
	Աշխ.	44	2002
Փետր. 2016	Ապր.	423	1695
	Ծառ.	201	1748
	Աշխ.	27	112
Մարտ 2016	Ապր.	1319	1677

	Ծառ.	105	572
	Աշխ.	66	47

Նկար 5.



Աղյուսակ 7. ՇՀ ամփոփ վերլուծություն հիմնական բաղադրիչների գծով

	Հ. 2015	Փ. 2015	Մ. 2015	Ա. 2015	Մ. 2015	Հն. 2015	Հլ. 2015	Օգ. 2015	Ս. 2015	Հ. 2015	Ն. 2015	Դ. 2015	2015թ. տարեկան Ք Գ. մլն դրամ		Հ. 2016	Փ. 2016	Մ. 2016
Ապր.	91	228	466	622	510	152	228	523	204	125	270	348	3767	6300	197	423	1319
Ծառ.	70	262	165	46	7	9	13	49	50	31	51	230	983	3628	143	201	105
Աշխ.	0	10	55	13	27	2	19	11	9	119	24	54	343	5489	44	27	66
Ընդհ.	161	500	686	681	544	163	260	583	263	275	345	632			384	651	1490
Կնքված պայմանագրերի թիվը, հատ	91	228	466	622	510	152	228	523	204	125	270	348			197	423	1319
Պետության գեներացրած պարտավորությունները, մլն դրամ	228	521	1136	1407	248	74	819	232	224	97	355	959			3229	1695	1677
Հաղթող ճանաչված ընկերությունների թիվը	13	28	49	74	45	27	38	58	37	34	44	40			29	61	89
Հաղթողների գումարային կենտրոնացվածությունը ըստ Հ.Հ. համաթվի	2396	2970	5996	1077	935	1173	3540	539	1265	1196	882	2051			2856	1631	916
Հաղթողների քանակային կենտրոնացվածությունը ըստ Հ.Հ. համաթվի	2073	1415	730	895	520	1880	643	805	1730	1053	1101	729			1327	760	909
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցությունների գումարի, ԸՀ	80%	76%	86%	49%	43%	52%	73%	31%	56%	52%	42%	69%			91%	61%	41%
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցությունների քանակի, ԸՀ	70%	59%	38%	37%	28%	59%	34%	36%	57%	48%	53%	39%			58%	36%	39%
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցությունների գումարի, ԸՀ	91%	87%	89%	65%	58%	66%	84%	41%	67%	69%	57%	81%			96%	76%	55%
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցությունների քանակի, ԸՀ	85%	65%	49%	43%	41%	72%	44%	44%	69%	60%	64%	53%			70%	49%	48%
Կենտրոնացվածության գնահատականը	Բարձր	Բարձր	Բարձր	Միջին	Միջին	Միջին	Միջին	Ցածր	Միջին	Միջին	Միջին	Միջին			Բարձր	Միջին	Միջին

Ստորև ներկայացված է ՇՀ կնքված ամսական պայմանագրերի ուսումնասիրության արդյունքները

Հունվար 2015 Ապրանքներ

Հաշվետու ամսում ապրանքների գծով կնքվել է 91 պայմանագիր, որի արդյունքում պետությունը գեներացրել է մոտ 228 մլն դրամի պարտավորություն:

2015թ. հունվարին ապրանքների գծով հաղթող են ճանաչվել 13 ընկերություններ: Հարկ է նշել, որ խոշորագույն և նվազագույն հաղթողների արժեքային խզվածությունը կազմում է մոտ 151,¹³ ինչն այլ հավասար պայմաններում նշանակում է գնումների շուկայի առավել համաչափ զարգացում: Նշված ընկերություններն չի ամրապնդվում երբ ուսումնասիրում ենք Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով կենտրոնացվածությունը: Մասնավորապես քանակային կենտրոնացվածությունը կազմում է 2073, իսկ գումարային կենտրոնացվածությունը 2396:

Գումարային վերլուծություն

Աղյուսակ 8. Խոշորագույն հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ
Սիֆիես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	77	5
Ֆլեշ ՍՊԸ	68	3
Ագաթ-777	36	2
Սմարթայն ՍՊԸ	12	1
Կոմպարկետ ՍՊԸ	12	29
Ընդամենը նշվածը	207	40
Նշված իմասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	91	44

Ամսվա ընթացքում հաղթողներ են շնորհվել 6 պատվիրատուների կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ամսում պատվիրատուների մասով կենտրոնացվածությունը բարձր է, մասնավորապես Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով հաշվարկով քանակային կենտրոնացվածությունը ստացվում է մոտ 6877, իսկ գումարային կենտրոնացվածությունը 2683:

¹³ Ամսվա խոշորագույն մատակարարը Ալֆա Ֆարմ ՓԲԸ-ն է՝ 209 մլն, իսկ նվազագույնը՝ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԱՄ ՍՊԸ 792 դրամ:

Աղյուսակ 9. Կենտրոնացվածությունն ըստ պատվիրատուների

Պատվիրատու	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումները, մլն դրամ/տեսակարար կշիռը	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումների թիվը, հատ/տեսակարար կշիռը	Պատվիրատուի խոշորագույն մատակարարի տեսակարար կշիռը պատվիրատուի ընդհանուր ամսական ՇՀ-ում	Պատվիրատու-Ֆիրմա ռիսկային կապի առկայությունը
Անշարժ գույք	73 (32%)	6 (6.6%)	73%	Սիֆիէս Օիլ Քորփորեյշն՝ ՍՊԸ
Նախագահի աշխատակազմ	20 (9%)	75 (82%)	16%	Կոմպմարկետ ՍՊԸ
ՔՕԽ	1 (0.4%)	2 (2.2%)	100%	Ֆլեշ ՍՊԸ
Աշխ. և սոց. հարցերի նախ.	59 (26%)	5 (5.5%)	40%	Ագաթ-777
Դատախազ.	67 (30%)	1 (1.1%)	100%	«Ֆլեշ» ՍՊԸ
Սպորտի և երիտ. հարցերի նախ.	5.8 (2.6%)	2 (2.2%)	100%	«Սիֆիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ

Քանակային տվյալներ

Աղյուսակ 10. Հաճախակի հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ
Սիֆիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	5	77
Կոմպմարկետ ՍՊԸ	29	12
Պրես Ստենդ ՍՊԸ	26	5.4
ԿՈՊԻ ՄԵՐՎԻՍ ՍՊԸ	8	1.1
Ընդամենը	77	96
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	85	42

Ծառայություններ

Հաշվետու ամսում ծառայությունների գծով կնքվել է 70 պայմանագիր, որի արդյունքում պետությունը գեներացրել է մոտ 587 մլն դրամի պարտավորություն: Հաղթող են ճանաչվել 18 ընկերություններ:

Խոշորագույն և նվազագույն հաղթողների արժեքային խզվածությունը կազմում է մոտ 2944¹⁴, ինչն այլ հավասար պայմաններում նշանակում է գնումների շուկայի առավել համաչափ զարգացում: Նշվածը մասնակի ամրապնդվում է, երբ ուսումնասիրում ենք Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով կենտրոնացվածությունը: Մասնավորապես քանակային առումով չի նկատվում կենտրոնացվածություն, քանի որ համաթիվը կազմում է 1408, իսկ գումարային առումով առկա է էական կենտրոնացվածություն, քանի որ համաթիվի արժեքը կազմում է 4108:

¹⁴ Ամսվա խոշորագույն մատակարարը Յուրբոմ ՍՊԸ-ն է՝ 368 մլն դրամ, իսկ նվազագույնը՝ Մեզ ՍՊԸ 125000 դրամ:

Գումարային վերլուծություն

Աղյուսակ 11. Խոշորագույն հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ
Յուրոմ ՍՊԸ	368	7
Յուտեկ-Ավտո ՍՊԸ	40	1
Ագաթ-777	36	2
Էմերալդա ՍՊԸ	34	6
Ջայնալարերը Հեռացվածների միավորում ՀԿ	28	2
Այիկանտե ՍՊԸ	23	2
ԱրմենՏել ՓԲԸ	14	2
Բեաթ Սոֆթ ՓԲԸ	13	1
Մեգասոֆթ ՍՊԸ	11	2
Ընդամենը նշվածը	568	25
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	97	36

Ամսվա ընթացքում հաղթողներ են շնորհվել 8 պատվիրատուների կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ամսում պատվիրատուների մասով կենտրոնացվածությունը բարձր է, մասնավորապես Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով հաշվարկով քանակային կենտրոնացվածությունը ստացվում է մոտ 3938, իսկ գումարային կենտրոնացվածությունը՝ 2835:

Աղյուսակ 12. Կենտրոնացվածությունն ըստ պատվիրատուների

Պատվիրատու	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումները, մլն դրամ/տեսակարար կշիռը	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումների թիվը, հատ/տեսակարար կշիռը	Պատվիրատուի խոշորագույն մատակարարի տեսակարար կշիռը պատվիրատուի ընդհանուր ամսական ՇՀ-ում	Պատվիրատու-Ֆիրմա ռիսկային կապի առկայությունը
Անշարժ գույք	95 (16%)	42 (60%)	61%	Յուրոմ ՍՊԸ
ՔՕԽ	1.5 (0.3%)	2 (2.9%)	62%	Արմենտել ՓԲԸ
Աշխ. և սոց. հարցերի նախ.	69 (12%)	5 (7%)	34%	Ջայնալարերը Հեռացվածների միավորում ՀԿ
Դատախազ.	70 (12%)	8 (11%)	51%	Յուրոմ ՍՊԸ
Մպորտի և երիտ. հարցերի նախ.	2 (0.3%)	2 (2.9%)	94%	Յուրոմ ՍՊԸ
Ֆինանսների նախարարություն	270 (46%)	2 (2.9%)	100%	Յուրոմ ՍՊԸ
Ոստիկանություն	77 (13%)	8 (11%)	51%	Յուտեկ-Ավտո ՍՊԸ
ԿԳՆ	1 (0.2%)	1 (1.4)	100%	Յուրոմ ՍՊԸ

Քանակային տվյալներ

Աղյուսակ 13. Հաճախակի հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Սպիտակ ֆիրմաներ
Յուրոմ ՍՊԸ	7	368	
Էմերալդա ՍՊԸ	6	34	
Բնեռային ուղի ՍՊԸ	19	2.8	
Գրիգոր Այվազյան ԱԶ	14	2.1	
Ընդամենը	46	407	
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	66	69	

Աշխատանքներ

Հաշվետու ամսում ըստ գնումների պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվության աշխատանքների մասով ձեռքբերումներ չեն կատարվել:

Փետրվար 2015 Ապրանքներ

Հաշվետու ամսում ապրանքների գծով կնքվել է 228 պայմանագիր, որի արդյունքում պետությունը գեներացրել է մոտ 521 մլն դրամի պարտավորություն: Հաղթող են ճանաչվել 28 ընկերություններ:

Խոշորագույն և նվազագույն հաղթողների արժեքային խզվածությունը կազմում է մոտ 23680¹⁵, ինչն այլ հավասար պայմաններում նշանակում է գնումների շուկայի առավել ոչ համաչափ զարգացում: Նշվածն մասնակիորեն ամրապնդվում է երբ ուսումնասիրում ենք Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով կենտրոնացվածությունը: Մասնավորապես, քանակային առումով կենտրոնացվածություն չի նկատվում, քանի որ կենտրոնացվածությունը կազմում է մոտ 1415, ինչը չի կարելի ասել գումարային կենտրոնացվածության մասին, որի արժեքը 2970 է:

Գումարային վերլուծություն

Աղյուսակ 14. Խոշորագույն հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ
Ֆլեշ ՍՊԸ	260	11
Միփիես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	94	7
Մակրո Ֆուդ ՍՊԸ	44	9
Խաչարամ կոնսերվատորիա ՍՊԸ	34	3
Յունիքոմփ ՓԲԸ	24	2
Հանս Ֆուս ՍՊԸ	13	2
Ընդամենը նշվածը	469	34
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ավանդ (%)	90	15

Ամսվա ընթացքում հաղթողներ են շնորհվել 15 պատվիրատուների կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ամսում պատվիրատուների մասով կենտրոնացվածությունը բարձր չէ, մասնավորապես Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով հաշվարկով քանակային կենտրոնացվածությունը ստացվում է մոտ 1327, իսկ գումարային կենտրոնացվածությունը՝ 2001, ինչն այնուհանդերձ որոշակիորեն գերազանցում է 1800-ի շեմը:

¹⁵ Ամսվա խոշորագույն մատակարարը Ֆլեշ ՍՊԸ-ն է՝ 260 մլն, իսկ նվազագույնը՝ Միսմա 11000 դրամ:

Աղյուսակ 15. Կենտրոնացվածությունն ըստ պատվիրատուների

Պատվիրատու	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումները, մին դրամ/տեսակարարեցիկոր	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումների թիվը, հատ/տեսակարարեցիկոր	Պատվիրատուի խոշորագույն մատակարարի տեսակարար կշիռը պատվիրատուի ընդհանուր ամսական ՇՀ-ում	Պատվիրատու-Ֆիրմա ռիսկային կապի առկայությունը
Անշարժ գույք	59 /11.3/	4 /1.8/	91%	Սիփիես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ
ՔԿԸ	171 /33/	30 /13/	50%	Ֆլեշ ՍՊԸ
Նախ. աշխ.	51 /9.9/	12 /5.3/	47%	Ֆլեշ ՍՊԸ
Դատախազ.	68 /13.2/	20 /8.8/	98.5%	Ֆլեշ ՍՊԸ
Սպորտի և երիտ. հարցերի նախ.	1.8 /0.4/	46 /20.3/	87%	Սմարթլայն ՍՊԸ
Ոստիկանություն	114 /22/	36 /16/	47%	Ֆլեշ ՍՊԸ
Արմավիրի մարզպետարան	7.1 /1.4/	2 /0.9/	100	Սիփիես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	1.9 /0.4/	12 /5.3/	90	Կապիտալ Քոնսթրաք ՍՊԸ
Կոտայքի մարզպ.	7.5 /1.5/	1 /0.4/	100	Սիփիես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ
ԿԳՆ	7.2 /1.4/	2 /0.9/	100	Ֆլեշ ՍՊԸ
ՀԾԿՀ	1.4 /0.3/	2 /0.9/	100	Սմարթլայն ՍՊԸ
Սյունիքի մարզպ.	10.5 /2/	1 /0.4/	100	Սիփիես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ
Սփյուռքի նախ.	2 /0.4/	38 /16.7/	50	Սմարթլայն ՍՊԸ
ՎՊ	0.5 /0.1/	19 /8.4/	100	Բլից Մեդիա ՍՊԸ
ՏԿՆ	13 /2.6/	2 /0.9/	100	Ֆլեշ ՍՊԸ

Քանակային տվյալներ

Աղյուսակ 16. Հաճախակի հաղթողները

Ամսվա հաճախակի հաղթողները	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մին դրամ	Մպիտակ ֆիրմաներ
Սմարթլայն ՍՊԸ	58	4	
Բլից Մեդիա ՍՊԸ	51	2	
Արվատեկ ՍՊԸ	26	6.7	
Փենրոքս ՍՊԸ	14	0.3	
ՀՀ մամուլի տարածման գործակալություն ՓԲԸ	13	1.1	
Ֆլեշ ՍՊԸ	11	260	
ՄԱԿՐՈՖՈՒԴ ՍՊԸ	9	43.6	
Սիփիես Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	7	94	
Ընդամենը ընդհանուր	189	412	
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	83	79	

Ծառայություններ

Հաշվետու ամսում ծառայությունների գծով կնքվել է 262 պայմանագիր, որի արդյունքում պետությունը գնեցեացրել է մոտ 989 մլն դրամի պարտավորություն: Նման համեմատաբար ավելի խոշոր գնումների պայմանավորված են տվյալ ամսում հաշմանդամների համար նախատեսված ձեռքբերումներով:

2015թ. փետրվարին ծառայությունների գծով հաղթող են ճանաչվել 27 ընկերություններ: Հարկ է նշել, որ խոշորագույն և նվազագույն հաղթողների արժեքային խզվածությունը կազմում է մոտ 58336,¹⁶ ինչն այլ հավասար պայմաններում նշանակում է գնումների շուկայի առավել ոչ համաչափ զարգացում: Նշվածը մասնակիորեն ամրապնդվում է երբ ուսումնասիրում ենք Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով կենտրոնացվածությունը: Մասնավորապես քանակային առումով կենտրոնացվածություն չի նկատվում, քանի որ կենտրոնացվածությունը կազմում է մոտ 1344, ինչը չի կարելի ասել գումարային կենտրոնացվածության մասին, որի արժեքը 3268 է:

Գումարային վերլուծություն

Աղյուսակ 17. Խոշորագույն հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ
Ինտերօբյեկտ ՍՊԸ	529	39
Պրոթեզաօբյեկտայեղիկ ՍՊԸ	172	66
Սատար Հաշմանդամների ՀԿ	91	15
Յուրոմ ՍՊԸ	59	1
Էմերալդա ՍՊԸ	30	6
Գարանտերվիս ՍՊԸ	27	2
Բնեռային ուղի ՍՊԸ	19	21
Բեսթ Սոֆթ ՓԲԸ	13	1
Մեգասոֆթ ՍՊԸ	11.4	2
Այք ՍՊԸ	11	1
Մ-ԲԻ-Ռ ՍՊԸ	11	7
Ընդամենը նշվածը	968	161
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	98	61

Ամսվա ընթացքում հաղթողներ են շնորհվել 10 պատվիրատուների կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ամսում պատվիրատուների մասով կենտրոնացվածությունը չափազանց բարձր է, մասնավորապես Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով հաշվարկով քանակային կենտրոնացվածությունը ստացվում է մոտ 3265, իսկ գումարային կենտրոնացվածությունը՝ 6794:

¹⁶ Ամսվա խոշորագույն մատակարարը Ինտերօբյեկտ ՍՊԸ-ն է 525 մլն, իսկ նվազագույնը՝ ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍՊԸ՝ 9000 դրամ:

Աղյուսակ 18. Կենտրոնացվածությունն ըստ պատվիրատուների

Պատվիրատու	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումները, մին դրամ/տեսակարարկշիռը	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումների թիվը, հատ/տեսակարարկշիռը	Պատվիրատուի խոշորագույն մատակարարի տեսակարար կշիռը պատվիրատուի ընդհանուր ամսական ՇՀ-ում	Պատվիրատու-Ֆիրմա ռիսկային կապի առկայությունը
Անշարժ գույք	131 /13/	48 /18/	45%	Յուրոմ ՍՊԸ
Դատախազ.	38 /4/	71 /27/	90%	Էմերալդա ՍՊԸ
Մպորտի և երիտ հարցերի նախ.	0.8 /0.1/	1 /0.4/	100%	Պատրոն Ռ Մ ՍՊԸ
Ոստիկանություն	34 /3.5/	13 /5/	79%	Գարանտերվիս ՍՊԸ
Շիրակի մարզպետարան	3 /0.3/	1 /0.4/	100%	ՋիէնՍի-Ալֆա ՓԲԸ
Աշխ. և սոց. հարցերի նախ.	803 /81/	122 /47/	65%	Ինտերօրթո ՍՊԸ
ՔՕՆ	0.8 /0.1/	1 /0.4/	100%	Կոմպասս ՍՊԸ
Էկ. նախ.	1.4 /0.1/	2 /0.8/	69%	Տաքսի Պրեստիժ ՍՊԸ
Քաղշին. Նախ.	0.5 /0.1/	1 /0.4/	100%	Հակվա ՍՊԸ
Ֆին. Նախ.	1 /0.1/	2 /0.8/	100%	Հայոց Աշխարհ օրաթերթ

Քանակային տվյալներ

Աղյուսակ 19. Հաճախակի հաղթողները

Ամսվա հաճախակի հաղթողները	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Սպիտակ ֆիրմաներ
<<Պրոթեգաօրթոպեյիկ>> ՍՊԸ	66	172	
ՖԻՆԼՈՂԻ ՍՊԸ	46	2.3	
<<Ինտերօրթո>> ՍՊԸ	39	525	
Բևեռային ուղի ՍՊԸ	21	19	
<<Սատար>> Հաշմանդամների ՀԿ	15	91	
Գրիգոր Ավագյան ԱԶ	14	2	
Գառուդեամուս ՍՊԸ	14	0.7	
«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ	7	11	
Էմերալդա ՍՊԸ	6	30	
Անուշ Պետրոսյան ԱԶ	5	1	
Ընդամենը ընդհանուր	233	853	
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	89	86	

Աշխատանքներ

Դիտարկվող ամսում աշխատանքների մասով իրականացվել է 10 ընթացակարգ, որի արդյունքում պետությունը գներացրել է 0.7 մլն դրամի պարտավորություն:

Հարկ է նշել, որ 10 ընթացակարգերից 9-ը բաժին է ընկնում նախագահի աշխատակազմին, ընդ որում դրանցից 8-ի դեպքում պայմանագիրը կնքվել է Ա/Զ Իրինա Մելքոնյանի հետ:

Մարտ 2015 Ապրանքներ

Հաշվետու ամսում ապրանքների գծով կնքվել է 466 պայմանագիր, որի արդյունքում պետությունը գներացրել է մոտ 1136 մլն դրամի պարտավորություն:

2015թ. մարտին ապրանքների գծով հաղթող են ճանաչվել 49 ընկերություններ:

Խոշորագույն և նվազագույն հաղթողների արժեքային խզվածությունը կազմում է մոտ 50048,¹⁷ ինչն այլ հավասար պայմաններում նշանակում է գնումների շուկայի առավել ոչ համաչափ զարգացում: Նշվածը մասնակիորեն ամրապնդվում է, երբ ուսումնասիրում ենք Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով կենտրոնացվածությունը: Մասնավորապես քանակային առումով կենտրոնացվածություն չի նկատվում, քանի որ կենտրոնացվածությունը կազմում է մոտ 730, ինչը չի կարելի ասել գումարային կենտրոնացվածության մասին, որի արժեքը 5996 է:

Գումարային վերլուծություն

Աղյուսակ 20. Խոշորագույն հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ	Ստուգման ենթակա ֆիրմաներ
ՖԷՀ ՍՊԸ	876	9	
Էլիտ-Սպորտ ՍՊԸ	68.6	1	
Վելվ ՍՊԸ	28.5	1	
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	20.8	3	
Կամար ՓԲԸ	19.2	1	
Պահապան ՍՊԸ	16.5	1	
Դանինի ՍՊԸ	13	1	
Արպանիվ ՍՊԸ	11	7	
Դարֆ ՍՊԸ	11	4	
Ընդամենը շվածք	1064	28	
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ավամեջ (%)	93.6	6	

Ամսվա ընթացքում հաղթողներ են շնորհվել 12 պատվիրատուների կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ամսում պատվիրատուների մասով կենտրոնացվածությունը բարձր է, մասնավորապես Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով հաշվարկով քանակային կենտրոնացվածությունը ստացվում է մոտ 1732, իսկ գումարային կենտրոնացվածությունը՝ 7157, ինչը էականորեն գերազանցում է 1800-ի մակարդակը:

¹⁷ Ամսվա խոշորագույն մատակարարը ՖԷՀ ՍՊԸ-ն է՝ 876 մլն, իսկ նվազագույնը՝ ԱԶ Ռուզաննա Հովհաննիսյան 17500 դրամ:

Աղյուսակ 21. Կենտրոնացվածությունն ըստ պատվիրատուների

Պատվիրատու	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումները, մին դրամ/տեսակարարկշիռը	Ամսվա ընթացքում կատարած ձեռքբերումների թիվը, հատ/տեսակարարկշիռը	Պատվիրատուի խառնարանային մատակարարի տեսակարար կշիռը պատվիրատուի ընդհանուր ամսական ՇՀ-ում	Պատվիրատու-Ֆիրմա ռիսկային կապի առկայությունը
Անշարժ գույք	8.7 /0.8/	108 /23/	17%	Մեծ Ծիածան ՍՊԸ
Դատախազ.	6 /0.5/	31 /6.7/	59%	Բլից Մեդիա ՍՊԸ
Սպորտի և երիտ. հարցերի նախ.	70 /6.1/	63 /13/	98%	Էլիտ-Սպորտ ՍՊԸ
Ոստիկանություն	957 /84/	91 /19/	91%	Ֆլեշ ՍՊԸ
Շիրակի մարզպետարան	0.9 /0.1/	21 /4.5/	100%	Նորմա Քարտ ՍՊԸ
Աշխ. և սոց. հարցերի նախ.	32 /2.8/	2 /0.4/	60%	Կամար ՓԲԸ
Էկ. նախ.	8 /0.7/	3 /0.6/	51%	Սիֆիէս Օլլ Քորպորեյշն ՍՊԸ
Քաղշին. Նախ.	0.6 /0.1/	15 /3.2/	14	Արվատեկ ՍՊԸ
Միլիտերի Նախ.	0.6 /0.1/	6 /1.3/	40%	Նորմա-Պլյուս ՍՊԸ
Արմավիրի մարզպ.	1 /0.1/	9 /1.9/	52%	Սմարթլայն ՍՊԸ
ՔԿԿ	38 /3.3/	8 /1.7/	43%	Պահապան ՍՊԸ
Նախագահի աշխատակազմ	13 /1.2/	109 /23.4/	21%	Մեծ Ծիածան ՍՊԸ

Քանակային տվյալներ

Աղյուսակ 22. Հաճախակի հաղթողները

Ամսվա հաճախակի հաղթողները	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մին դրամ
<<Ֆլեշ>>ՍՊԸ	9	876
<<ՊատրոնՌՄ>>ՍՊԸ	15	0.5
<<Կոմպասս>>ՍՊԸ	6	0.2
<<ԷդվարդՔոմիտյոներս>>ՍՊԸ	6	0.3
<<ԷյԳրուպ>>ՍՊԸ	9	1.8
<<Նորմա-Պլյուս>>ՍՊԸ	19	1.9
ՏոնէքսՍՊԸ	18	1.8
<<ՋիԷմՋեթսերվիս>>ՍՊԸ	7	0.3
ԱՐՏՏԵԽՍՊԸ	6	2.2
Ա/ՁՄարատՀարությունյան	5	0.2
<<Արվատեկ>>ՍՊԸ	16	2.5
ՍմարթլայնՍՊԸ	44	2.5
<<Նորմա-Քարտ>>ՍՊԸ	21	0.9
ՓենԲոքսՍՊԸ	5	0.4
ՄեծԾիածանՍՊԸ	27	4.6
«Մագնատէս»ՍՊԸ	24	2.6
«ՄակրոՖոնո»ՍՊԸ	88	8.2
ՖոտոնՍՊԸ	7	0.8
Ա/ՁՀովսեփՊետրոսյան	5	1.1
<<Արպանիվ>>ՍՊԸ	7	10.8
ԲլիցՄեդիաՍՊԸ	43	4
<<ՊրեսՍտենդ>>ՍՊԸ	28	5.3
Ընդամենը/շվածը	415	929
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ամսվա մեջ (%)	89	82

Ծառայություններ

Հաշվետու ամսում ծառայությունների գծով կնքվել է 165 պայմանագիր, որի արդյունքում պետությունը գեներացրել է մոտ 126 մլն դրամի պարտավորություն: Հաղթող են ճանաչվել 54 ընկերություններ:

Խոշորագույն և նվազագույն հաղթողների արժեքային խզվածությունը կազմում է մոտ 216¹⁸, ինչն այլ հավասար պայմաններում նշանակում է գնումների շուկայի առավել համաչափ զարգացում: Նշվածն ամրապնդվում է երբ ուսումնասիրում ենք Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով կենտրոնացվածությունը: Մասնավորապես և քանակային և գումարային առումով կենտրոնացվածություն չի նկատվում, քանի որ կենտրոնացվածությունը համապատասխանաբար կազմում է մոտ 1016 և 632 ինչը վկայում է տվյալ ամսում ծառայությունների ձեռքբերումների խիստ ցածր կենտրոնացվածության մասին:

Գումարային վերլուծություն

Աղյուսակ 23. Խոշորագույն հաղթողները

Ամսվա խոշորագույն հաղթողները	Ամսվա ընթացքում ձևավորված պարտավորությունները հաղթող մասնակցի նկատմամբ, մլն դրամ	Ամսվա ընթացքում հաղթող մասնակցի կողմից հաղթած մրցույթների քանակը, հատ
Պանարմենիան Մեդիա Գրուփ ՓԲԸ	20	1
ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ	11.4	5
Գարանտսերվիս ՍՊԸ	14.3	1
Ընդամենը ընդամենը	45.8	7
Նշվածի մասնաբաժինը ընդհանուր ավամեջ (%)	36	4

Ամսվա ընթացքում հաղթողներ են շնորհվել 10 պատվիրատուների կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ամսում պատվիրատուների մասով կենտրոնացվածությունը բարձր չէ, մասնավորապես Հերֆինդալ-Հիրշմանի բանաձևով հաշվարկով քանակային կենտրոնացվածությունը ստացվում է մոտ 2553, իսկ գումարային կենտրոնացվածությունը՝ 3133, ինչը էականորեն գերազանցում է 1800-ի մակարդակը:

¹⁸ Ամսվա խոշորագույն մատակարարը՝ Պանարմենիան Մեդիա Գրուփ ՓԲԸ՝ 20 մլն, իսկ նվազագույնը՝ ՍԵԳ ՍՊԸ 92400 դրամ:

Աղյուսակ 24. Կենտրոնացվածությունն ըստ պատվիրատուների

